



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ  
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի, 2-րդ փողոց թիվ 48 , Հեռ.060517670 էլ.փոստ  
verinptghni.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**15 ԱՊՐԻԼԻ 2020ԹՎԱԿԱՆԻ N79**

**ԱՐՄԵՆ ԴԱԼԼԱՔՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջը, ինչպես նաև քաղ. Արմեն Դալլաքյանի դիմումը՝ **որոշում եմ**

1. Արմեն Դալլաքյանին տալ իրեն պատկանող բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողամասում դեղատան և պարսպապատման կառուցման շինարարական աշխատանքները սկսելու թույլտվություն :
2. Հանձնարարել Արմեն Դալլաքյանին շինարարական աշխատանքներն իրականացնել համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի համաձայն:
3. Շինարարական աշխատանքները սկսելուց հետո եռօրյա ժամկետում Վերին Պտղնի համայնքի համայնքապետարան ներկայացնել ձև N5 տեղեկանքը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**



**Գ. ՊՈՂՈՍՅԱՆ**

2020 թ.ապրիլի 15  
գ.Վերին Պտղնի



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ  
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի, 2-րդ փողոց թիվ 48, հեռ.060517670, էլ.փոստ  
verinptghni.kotayq@mfa.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
16 ԱՊՐԻԼԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 80**

**ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 17-րդ հոդվածի պահանջներով՝ **որոշում եմ**

2020 թվականի ապրիլի 20-ին ժամը 15:00-ին հրավիրել Վերին Պտղնի համայնքի ավագանու արտահերթ նիստ՝ հետևյալ օրակարգով

1. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիա ստանալու նպատակով «Վերին Պտղնի համայնքում խմելու ջրի ջրագծի անցկացում» ծրագիրը հաստատելու մասին:
2. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիա ստանալու նպատակով «Վերին Պտղնի համայնքում արևային կայանների տեղադրում» ծրագիրը հաստատելու մասին:
3. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիա ստանալու նպատակով «Վերին Պտղնի համայնքում մշակույթի տան կառուցում» ծրագիրը հաստատելու մասին:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**



**Գ. ՊՈՂՈՍՅԱՆ**





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆՊՏՂՆԻ  
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի 2-րդ փողոց, թիվ 48, հեռ. 060 517670, էլ.փոստ  
verinptghni.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

17 ԱՊՐԻԼԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 81

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2020ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ  
ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ  
ԽՄԵԼՈՒ ԶՐԻ ԶՐԱԳԾԻ ԱՆՑԿԱՑՈՒՄ», «ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ  
ԱՐԵՎԱՅԻՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ», «ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ  
ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԵՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ  
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ  
ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 11-րդ հոդվածի և 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջների, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 4-րդ հոդվածի պահանջների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N1325-Ն որոշմամբ սահմանված կարգի, հիմք ընդունելով Վերին Պտղնի համայնքի ավագանու 2016 թվականի ապրիլի 15-ի N21-Ն որոշումը՝ **որոշում եմ.**

1. 2020 թվականի մայիսի 04-ին Վերին Պտղնի համայնքապետարանի շենքում հրավիրել հանրային բաց լսումներ՝ Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «Վերին Պտղնի համայնքում խմելու ջրի ջրագծի անցկացում», «Վերին Պտղնի համայնքում արևային կայանների տեղադրում», «Վերին Պտղնի համայնքում մշակույթի տան կառուցում» ծրագրերի բյուջետային ֆինանսավորման հայտի վերաբերյալ:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «Վերին Պտղնի համայնքում խմելու ջրի ջրագծի անցկացում», «Վերին Պտղնի համայնքում արևային կայանների տեղադրում», «Վերին Պտղնի համայնքում մշակույթի տան կառուցում» ծրագրերի բյուջետային ֆինանսավորման հայտի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկումների հրավերը՝ համաձայն հավելվածի:
3. Հանրային քննարկման ընթացքում իրականացվող բաց լսումների անցկացումը հանձնարարել աշխատակազմի առաջին կարգի մասնագետ քաղաքաշինության, հողօգտագործման, տնտեսական ենթակառուցվածքների, կոմունալ տնտեսության, շրջակա

միջավայրի պաշտպանության և տրանսպորտի հարցերի խորհրդակցական

մարմնի անդամ Մաի Հակոբյանին:

4. Վերին Պտղնի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արման Զուրաբյանին՝

1) Համայնքապետարանի պաշտոնական կայքում տեղադրել Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «Վերին Պտղնի համայնքում խմելու ջրի ջրագծի անցկացում», «Վերին Պտղնի համայնքում արևային կայանների տեղադրում», «Վերին Պտղնի համայնքում մշակույթի տան կառուցում» ծրագրերի բյուջետային ֆինանսավորման հայտի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկումների հրավերը, և այն փակցնել համայնքի ղեկավարի նստավայրում՝ բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում, նաև այն վայրերում, որոնք մատչելի են համայնքի բնակիչներին՝ առնվազն մեկ տեղ յուրաքանչյուր երեք հարյուր բնակչի համար:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Գ. ՊՈՂՈՍՅԱՆ